









## Մշակութային Արձագանգ

# Վեհափառը Համերգեն Առաջ Իր Օրինութիւնը Փոխանցած Է Ռուսահայոց Թեմի Պարային Համոյթներուն



Յուլիս 25-ին ՆԱՍՍ Քարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ իր օրինութիւնը փոխանցեց ՀԱԵ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեանի հայոց թեմի՝ Մոսկովայի՝ «Հայասա», «Վարդավառ», Ս. Փեթրըս-պոլի» «Նախիր» եւ Տոնի Ռոստովի «Չուարթոնգ» համոյթներու պարողներուն: Անոնց կ'ուղեկցէին թեմի հոգեւոր հայրերն ու համոյթներու ղեկավարները: Այս մասին «Հայերն այսօր»-ին կը յայտնեն Մոսկովայի «Հայրորդաց տան» տեղեկատուական կեդրոնէն:

Վեհափառը համոյթները շնորհաւորեց «Իմ Հայաստան» համահայկական փառատօսին փայլուն ելոյթներու կապակցութեամբ եւ հետաքրքրուեցաւ, թէ ինչ կը ցանկային ստանալ իրմէ: Պարողները ցանկացան ճանաչողական շրջայց կատարել Էջմիածին քաղաքին մէջ... Վեհափառի օրինութեամբ անոնց ցանկութիւնը յառաջիկային կեանքի կը կոչուի:

Ամենայն Հայոց Հայրապետի հետ հանդիպումէն յետոյ՝ Էջմիածինի «Հրաչ եւ Սիւզան Թուֆայեան» հայրորդաց տան

մէջ համոյթները ներկայացան համերգային ծրագիրով: Ներկայացնելով պարային համոյթները՝ հայրորդաց տանը տրուեցին հոգեւոր տեսուչ Հայր Կոմիտաս վարդապետ Յովնանեան ըսաւ... «Հայ եկեղեցին ամենուր ազգապահպանման խարիսխն է: Ինչքան էլ փորձեն եկեղեցին կոտորել կամ ոչ իրական պատկերով ներկայացնեն՝ ճշմարտութիւնը մէկն է, որտեղ առկայ է հայ եկեղեցին, այնտեղ հայութիւնը պահպանում է իր դիմագիծը»:

Իսկ հայրենիքէն դուրս հայկական դիմագիծի պահպանութեան հետ կապուած՝ ներկայներու բոլոր կասկածները փարատեցին, երբ բեմ բարձրացան տղաները՝ խորխորտ եւ աղջիկները՝ նազանի կեցուածքով:

«Հայասա» պարային համոյթի գեղարուեստական ղեկավար Արմինէ Ամիրեանի, «Վարդավառ»-ի գեղարուեստական ղեկավար Մարգարիտա Գրիգորեանի, «Չուարթոնգ»-ի գեղարուեստական ղեկավար Արմեն Գրիգորեանի, «Նախիր»-ի գեղարուեստական ղեկավար Չաւեն Վիրապեանի պարողները ներկայացան չորսական իւրօրինակ, բովանդակալից եւ գեղեցկագոյն պարերով:

«Ինչպէս կ'ըսեն» սիրտս փառաւորուեցաւ այս հայրորդիներու պարերէն: Այսչի կարելի է, թէ ինչ վարպետութեամբ ու ճկունութեամբ կը ներկայացնէին հայկական պարը ու ասիկա այն պարագային, որ հեռու են հայոց հողի ազդեցութենէն: Կ'ուզեմ, որ անոնց՝ Հայաստան այցելելու բարի ու լուսաւոր առիթները շատ ըլլան, որպէսզի անոնք գտնեն հայրենիքը»:

Ինչի հետ կապ պահպանելու հնարաւորութիւն ունենան», - մեզի հետ զրոյցին ըսաւ հանդիսատես Էմմա Տերտերեան:

Հանդիսատեսի բուն-չերմ ծափող-չոյնները եւ մինչեւ վերջին վայրկեանը լեփ-լեցուն դահլիճը կը խօսէին համերգային ծրագրի հետաքրքրական, սպասուած եւ ստացուած ըլլալուն մասին... մինչեւ վերջ դահլիճէն չէր հեռանար անգամ ոտքի վրայ մնացած հանդիսատեսը:

Համերգային ծրագրի աւարտին Տեր Պօղոս արեւոյ Վարդանեան՝ դիմելով ներկայներուն, ըսաւ... «Մեզի համար կրկնակի ուրախութիւն է այսօր գտնուիլ այս դահլիճին մէջ, քանի որ հայրենիքէն դուրս կ'ապրինք: Սակայն ասիկա չիսանգարեց այս սրահ բերել այն ոգեւորութիւնը, հաւատքը, սերն ու հզօրագոյն պատմութիւնը, որ մենք ստացած ենք մեր Նախնիներէն: Մեր շնորհակալութիւնը համոյթներու ղեկավարներուն, որոնք կրցած են ազգային հանդէպ սեր սերմանել պարողներուն մէջ: Ինչպէս Հայր Սուրբ ըսաւ՝ ես ալ այն ամուսնուրդ ունիմ, որ հայ եկեղեցին՝ յատկապէս Սփիւռքի մէջ, խարիսխն է հայապահպանութեան, բայց առաւել է մայր խարիսխը մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, ուր մենք այսօր եղանք, գոհութիւն առաքեցինք բարձր-տալիս, ստացանք Վեհափառ Հայրապետի օրինութիւնը եւ մէկ անգամ ես ամրապնդեցինք այն հաւատքը, որ ուր ալ որ ըլլանք՝ մենք հայ ժողովուրդի արժանի գաւակներն ենք»:

## Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Հայրենադարձ Նկարիչ Մարիամ Ղարիպեանի Ձեռագործ Աշխատանքներու Ցուցահանդէսը

26 Յուլիսին Երեւանի պատմութեան թանգարանին մէջ ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ բացուեցաւ Չեխիայէն հայրենադարձուած նկարիչ, ասեղնագործութեան վարպետ եւ ձեւաւորող Մարիամ Ղարիպեանի ձեռագործ աշխատանքներու ցուցահանդէսը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Երեւանի պատմութեան թանգարանի տնօրէն Արմինէ Սարգսեան:

Արուեստագետին մաղջելով ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան համահայկական ծրագիրներու վարչութեան պետ Գագիկ Գեանջուճեան ներկայացուց նախարար Հրանտշ Զակարեանի ողջոյնի խօսքը, ուր մասնաւորապէս ըսուած էր. «Յաղափարելով բոլոր դժուարութիւնները՝ Մարիամ Ղարիպեանն արարել է, հոգեւոր սնունդ առել ու ստեղծագործելու պարարտ հող գտել՝ Հայաստան պարբերական այցելութիւնների ժամանակ: Մարիամը ինքնատիպ արուեստագետ է, ով ունի իր ձեռագիրը եւ ում անչափ քննուչ ու նուրբ հոգին արտացոլում է աշխատանքներում, մասնաւորապէս՝ Այնթապի ասեղնագործութեան մէջ: Վստահ եմ, որ Մարիամի իրական յաջողութիւնները նոր պիտի թափանցեն դուրս»:

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի եւ քրտաշրջութեան վարչութեան պետ Ռուբեն Յովհաննիսեան նշեց, որ քաղաքապետարանը սիրով եւ հպարտութեամբ աջակցած է Մարիամ Ղարիպեանի աշխատանքներու ցուցահանդէսին կազմակերպման:

Արուեստագետին շնորհաւորեցին Հայկական արհեստներու զարգացման կեդրոնի փոխտնօրէն Անուշ Զարամալեյեանը, նկարիչ-ձեւաւորող Նուր, ոճաբան-մոտեւորող Արամ Նիկողեանը: Անոնք ընդգծեցին, որ Մարիամը, ժամանակակից զգեստներու ձեւաւորման մէջ օգտագործելով հայկական ասանդակային ասեղնագործութիւնը, իր աշխատանքներուն մէջ իւրօրինակ ձեռագիրով համադրած է իրեն ու նորը:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Մարիամ Ղարիպեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ անձամբ նախարար Հրանտշ Զակարեանին՝ Հայրենիքի մէջ աշխատանքներու ցուցահանդէսը կազմակերպելու եւ



բարձր գնահատանքի համար: Հայրենադարձ նկարիչը իր երախտագիտութեան խօսքը յայտնեց նաեւ Երեւանի քաղաքապետարանին, նկարիչ-ձեւաւորող Նուրի աջակցութեան համար: «Ինձի համար այս ցուցահանդէսը ամենակարեւորն է, քանի որ կազմակերպուած է Հայրենիքի մէջ: Համոզուած եմ, որ մայր հողը ինձի ուժ կ'ու տայ եւ դեռ պիտի ստեղծեմ արժեքաւոր աշխատանքներ»:

Մարիամի աշխատանքներու ցուցահանդէսը կազմակերպուած են Եւրոպայի շարք մը երկիրներու եւ ԱՄՆ-ի մէջ: Չեխիոյ մէջ բնակելու տարիներու տեղի հայ համայնքին մէջ Մարիամը աշխուժ գործունէութիւն ծաւալած է՝ նկարչութիւն եւ ասեղնագործութիւն դասաւանդելով հայկական շաբաթօրեայ դպրոցին մէջ:

Երեւանի մէջ Մարիամ Ղարիպեանի աշխատանքներու ցուցահանդէսը պիտի տեսնեն 10 օր:

## «Սփիւռք» Ամառնային Դպրոց-2016. Սփիւռքահայ Ուսուցիչները Այցելեցին Դերենիկ Տեմիրճեանի Անուան Թիւ 27 Հիմնական Դպրոց

### ԼՈՒՍԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«Սփիւռք» ամառնային դպրոց ծրագրի կամար, ԵՊՀ պատմութեան բաժանմունքի սփիւռքագիտութեան ամպիոնի ուսանող

Աւարտին կը մտնէ «Սփիւռք» ամառնային դպրոցը, որուն ծիրէն ներս սփիւռքահայ ուսուցիչները կատարեցին իրենց վերջին այցելութիւնը:

Յուլիս 27-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան «Սփիւռք» ամառնային դպրոցի ծրագրի «Հայոց լեզուի եւ պատմութեան ուսուցիչներ, կրթական գործի կազմակերպիչներու վերապարտաստում» դասընթացի մասնակիցները այցելեցին Երեւանի Դերենիկ Տեմիրճեանի անուան թիւ 27 հիմնական դպրոց:

«Հայերն այսօր»-ի փոխանցմամբ՝ սփիւռքահայ ուսուցիչներուն կ'ուղեկցէր մ.գ.թ. զատիկա Վրմիւն Աշիկեան, եւ չնայած դպրոցէն ներս ընթացող վերանորոգման աշխատանքներուն՝ սփիւռքահայ ուսուցիչները արժանացան ջերմ ընդունելութեան: Արմինէ Աշիկեան իր խօսքին մէջ նշեց, որ սիրով ընտրած են այս դպրոցը եւ

յոյս ունի, որ ուսուցիչները իրենց հետ այստեղէն կարելու փորձ կը տանին, որ պիտի կարենան օգտագործել իրենց դպրոցներուն մէջ:

Դպրոցի աշխատակիցները հիւրերուն ծանօթացուցին դպրոցի առօրեային, կազմակերպեցին փոքրիկ շրջայց: Դպրոցի տնօրէն Սուսաննա Սարգսեան ներկայացուց փոքրիկ տեսանիւթ դպրոցի մասին: Այն իր խօսքին մէջ նշեց, որ իրենց դպրոցը Հայաստանի մէջ արեւմտեան է, որ ներառական կրթութեան կարիք ունեցող երեխաներուն ընդգրկեց ռուսական գործընթացի մէջ: Տնօրէնը ծանօթացաւ ուսուցիչներուն հետ, եղաւ հարց ու պատասխան, որուն ընթացքին ուսուցիչները յղեցին իրենց հետաքրքրող հարցերը:

«Դպրոցին մէջ հետաքրքիր տպաւորութիւններ ստացաւ, առաջին անգամ կ'այցելի այս դպրոցը: Դպրոցը հետաքրքիր փորձ



ունի՝ կապուած ներառական կրթութեան հետ, այստեղ կարծես դպրոց կը գործէ դպրոցի մէջ: Հաշուի առնելով այն, որ այս դպրոցը ներառական կրթութեան հիմք կը հանդիսանայ, ինձի հետաքրքրեց, թէ այստեղ ինչպիսի երեխաներ կը յաճախեն: Հիացած եմ, որ ինչիւրեք ունեցող երեխաները հաւասար իրաւունքներով կը յաճախեն դպրոցը», - «Հայերն այսօր» թղթակիցին հետ զրոյցին իր տպաւորութիւններով կիսուեցաւ «Սփիւռք» ամառնային դպրոցի մասնակից, Ռուսաստանի Դաշնութեան Պրեմիեր քաղաքի ուսուցչուհի Անի Կաշատրեան:

«Հայերն Այսօր»

## Գիտութեան Աշխարհ

# Սահմանամերձ Կողբ Գիւղին Մէջ «ԹՈՒՄՕ» Կը Բացուի



«ԹՈՒՄՕ» ստեղծարար արհեստագիտութիւններու կեդրոնը ու «Կողբ» կըրթութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան զարգացման հիմնադրամը Յուլիս 26-ին կնքած են Փոխընթացային յուշագիր Տաւուշի մարզի՝ սահմանամերձ Կողբ գիւղին մէջ «ԹՈՒՄՕ» կեդրոն բանալու մասին:

Նախաձեռնութիւնը իրականութիւն կը դառնայ «Կողբ» կըրթութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան զարգացման հիմնադրամի եւ Սիմոնեան կրթական հիմնադրամի համագործակցութեան, ինչպէս նաեւ արժանաշիւհայ բարերարներ Պօղոս Էքսերցեանի, Գրիգոր Սիմոնի Ռոզիի, Նշան Տեւեռճեանի եւ այլ բարերարներու աջակցութեան շնորհիւ:

«ԹՈՒՄՕ» ստեղծարար արհեստագիտութիւններու կեդրոնէն կը տեղեկացնեն, որ կը նախատեսուի կեդրոնի շինարարութիւնը մեկնարկէ այս տարուան Սեպտեմբերին, իսկ ուսումնական գործընթացը կը սկսի 2018 թուականին: Այն նախատեսուած կ'ըլլայ առնուազն 600 ուսանողի համար: Կեդրոնին մէջ կ'իրականացուի նոյն ծրագիրը, եւ կը դասաւանդեն նոյն մասնագետները, որ Երեւանի, Դիլիճանի, Կիւմրիի եւ Ստեփանակերտի «ԹՈՒՄՕ»-ներուն մէջ կը դասաւանդեն, ինչպէս նաեւ Կողբ կը իրաւիւրին միջազգային մասնագետներ, որոնք իրենց փորձով կը կիսուին պատանիներուն հետ:

«ԹՈՒՄՕ»-ի տնօրէն Մարի Լու Փափագեան նշած է. «ԹՈՒՄՕ»-ն տարուէ տարի

ատելի հասանելի կը դառնայ Հայաստանի գանազան հատուածներուն մէջ բնակող պատանիներուն համար: Կողբ հիմնադրամին հետ այս համագործակցութիւնը յատկապէս կարելու կը համարենք, քանի որ այն՝ քանի մը համայնք միաւորելով, հնարաւորութիւն կու տայ «ԹՈՒՄՕ»-ն տարածել ատելի փոքր բնակավայրերու մէջ: Կողբի «ԹՈՒՄՕ»-ն կ'ընդգրկէ ոչ միայն Կողբի, այլ նաեւ Նոյեմբերեանի, Բերդաւանի եւ մօտակա գիւղերու պատանիներուն, որոնք կը կարենան մասնագիտանալ եւ արդիական հմտութիւններ ստանալ, ինչպէս նաեւ ապագային աշխատիլ տեղուրէն կրայ եւ առցանց, առանց հեռանալու իրենց ծննդավայրէն եւ զարգացնելով գալին»:

«Կողբ» հիմնադրամի հոգեբարձուներու խորհուրդի նախագահ Արման Բարսեղեան վստահութիւն յայտնած է, որ 2018-ին Տաւուշի մարզի սահմանամերձ Կողբ, Բերդաւան, Նոյեմբերեան եւ այլ համայնքներու երեխաներուն համար դռները կը բանայ «ԹՈՒՄՕ» ստեղծարար արհեստագիտութիւններու ժամանակակից կեդրոնը, որ կը նպաստէ երեխաներու արտադպրոցական կրթութեան եւ մրցունակութեան, ինչպէս նաեւ այդ համայնքներուն մէջ ընդհանրապէս կենսիկ օրակի բարեւաստումը:

Կողբի «ԹՈՒՄՕ»-ի ուսանող կրկան դառնալ 12-18 տարեկան պատանիները: Ուսումը կեդրոնին մէջ՝ ինչպէս եւ բոլոր քաղաքներու «ԹՈՒՄՕ»-ներուն մէջ, անվճար կ'ըլլայ:

## Յայտնի Պլուկըրը Հանդէս Եկած Է Արցախի Միջնադարեան Նշանաւոր Գործիչները Պատկերող Պատասաններու Ստեղծման Նախաձեռնութեամբ



Պլուկըր եւ ձեւաւորող, տուեալներու մարմնաւորման յայտնի մասնագետ Սեդրակ Մկրտչեան հանդէս եկած է Արցախի միջնադարեան շարք մը նշանաւոր գործիչները պատկերող պատասաններու ստեղծման նախաձեռնութեամբ:

Ինչպէս կը փոխանցէ Armscoop.com-ը, ստեղծուած պատասաններու շարքը կը նախատեսուի օգտագործել կրթական եւ տեղեկատուական նպատակներով, մասնաւորապէս համացանցի վրայ՝ Վիքիփետիա հանրագիտարանին մէջ եւ այլուր, ինչպէս նաեւ տպագրական եղանակներով:

Սեդրակ Մկրտչեան նաեւ կը նշէ, որ միջնադարեան հայ պատմագրութեան մէջ յիշատակուող՝ Արցախի եւ յարակից տարածքներուն մէջ ապրած ու գործունէութիւն ծաւալած նշանաւոր անձանց վերաբերեալ պատկերագրական նիւթեր գործնականին մէջ չեն պահպանուած:

Նախաձեռնութեան իրագործման նպատակով պլուկըրը կը դիմէ նկարիչներու աշակցութեան: Այդ կապակցութեամբ նախաձեռնութեան հեղինակը կերպարներու խումբ մը կազմած է, որ կը ներկայացնենք ստորեւ՝

1. Աւան հարիւրապետ (Աւան Եուզպաշի, մօտ 1670-1735), 18-րդ դարու առաջին քառորդի ազատագրական շարժումներու ղեկավար գործիչ Արցախի մէջ:
2. Մելիք Եգան (մահ. 1744), ականաւոր ռազմական-քաղաքական գործիչ, Դիզակ գաւառի տիրակալ, Խամսայի

մեղիցութիւններու ընդհանուր կառավարիչ:

3. Մովսէս Կաղանկատուացի (7-րդ դար), հայ պատմիչ, ծնած է Արցախի Կաղանկատուոյ գիւղին մէջ (ներկայիս Մարտակերտի շրջանի տարածքին): «Աղուանից աշխարհի պատմութիւն» գիրքի կազմողն է:

4. Եսայի Հասան - Չալալեան (մահ. 1728), 17-18-րդ դարու հայ նշանաւոր հոգեւորական, մատենագիր, հայ ազատագրական շարժման խոշոր երախտաւոր: 1701-1728 թթ. եղած է Գանձասարի կաթողիկոս:

5. Պաղտասար Հասան Ծալալեան (1775 - 1854), Արցախի թեմի առաջնորդ՝ մետրոպոլիտ (1830-1854):

6. Յովհաննէս Հասան-Ծալալեան (մահ. 1787), հայ ազգային-ազատագրական շարժման նշանաւոր գործիչ, Գանձասարի կաթողիկոս (1763-87):

7. Ծալալ Ա. 1214.1261-ին հաչէնի թագաւոր, Հասան-Ծալալեաններու տոհմի հիմնադիր: Գանձասարի վանքին մէջ պահպանուած է Ծալալ Ա-ի պատկերով եգակի խորաքանդակ:

8. Սաիլ (Սմբատ) Սմբատեան, 9-րդ դարու հայ նշանաւոր իշխան, հաչէնի առաջին իշխաններէն մէկը:

9. Սահակ Սեւաստ (մօտ 895-940), հայ իշխան հայկական Անանշահիկներու իշխանատոհմէն, Գարդմանքի կառավարիչ:

10. Եսայի Ապու-Մուսէ (9-րդ դար), Հարաւային Արցախի նշանաւոր իշխաններէն, յաջողութեամբ պայքարած է արաբական նուաճողական քաղաքականութեան դէմ:

11. Կիրակոս Գանձակեցի (13-րդ դար), նշանաւոր հայ պատմիչ:

12. Համամ Արեւելցի, 9-րդ դարու 2-րդ կէսի իշխան, ապա՝ թագաւոր Հայոց Արեւելցի Կողմանց:

Լուսանկարին մէջ պատկերուած է Շուշիի հայկական մասի ընդհանուր տեսքը, 19-րդ դարու վերջը



# Մարզական

## Պատերազմ

### Ասիոյ Մինչեւ 18 Տարեկան Ախոյեանութիւն

**Լիբանան Գրաւեց Խմբակին Առաջին Դիրքը**  
 Ասիոյ մինչեւ 18 տարեկան տղոց ախոյեանութեան հինգերորդ մրցումին, Լիբանանի տղաքը մրցեցան Իրանի գորաւոր հաւաքակախին դէմ եւ կրեցին իրենց առաջին պարտութիւնը 54-76 հաշիւով, չորս անընդմէջ յաղթանակներ ետք: Լիբանանի ամենալաւ նշանակողներն էին Մարք Խուրիի՝ 14 կէտ, 7 ռիպաւուս եւ 1 փոխանցում եւ Ալի Մանսուր՝ 10 կէտ եւ 3 ռիպաւուս: Լիբանան գրաւեց խմբակին առաջին դիրքը եւ քառորդ աւարտական հանգրուանին պիտի մրցի Թայլանտի հաւաքակախին դէմ:

## Ճաբաթավերջի Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել շաբաթավերջի մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը):

**Ուրբաթ 29 Յուլիս 2016**  
**ԱՄՏՐՈՒՄԻՆ ԵՒ ՄԻՋԱԶՄԱԿԱՆ ԱՆՈՅՆԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**  
 Ժամը 13:00 Թորքմեն Զոնայի (4) - Աթլետիկ Մարտիս (3)  
**ԹԵՆԻՍԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՍԹԸՐԸԻ ԵՒ ՄԱՍՏՐՈՒՄ ԱՄՏՐՈՒՄ**  
 Ժամը 17:00-Էն սկստալ europa 1 կայանէն,

**Շաբաթ 30 Յուլիս 2016**  
**ԱՄՏ-Ի ՄԻՋԱԶՄԱԿԱՆ ԱՆՈՅՆԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**  
 Ժամը 20:00 Պարսելունա (7) - Սելթիք (6)  
 Ժամը 22:00 Ռեալ Մատրիտ (10) - Չելսի (2)  
 Ժամը 00:00 Իսթեր Միլան (9) - Պալլոս Միլանիս (5)  
**ՈՒՈՒՄԻՆ ԱՆՈՅՆԱՆՆԵՐՈՒ 17-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**  
 Ժամը 17:30 Չելսի Ս. Փէթրսպորտ - Լոքոմոթիվ Մոսկուա  
 Ժամը 20:00 Անժի Մախաճալա - ԲԿՄՄ Մոսկուա  
 Ժամը 21:30 Ռոսթով - Կազովկի Օրենպուրկ  
**ՊՐԿՈՒՄԻ ԱՆՈՅՆԱՆՆԵՐՈՒ 17-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**  
 Ժամը 00:30 Սփորթ Ռեյնիֆ (14) - Աթլետիկ Փարանսես (5)  
**ԱՄՏ-Ի ԱՆՈՅՆԱՆՆԵՐՈՒ**  
 Ժամը 22:00 Նիւ Եորք Սիթի (1) - Քլորաթո Ռեյնիֆ (2)  
**ԹԵՆԻՍԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՍԹԸՐԸԻ ԿԻՍՄԱՐՏ ԳՆԱԳՐՈՒՄ**  
 Ժամը 17:00-Էն սկստալ europa 1 կայանէն,

**ՎԱՃԱՆ ԹԵՔԵՆԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ**  
 2016-2017  
 ՎԼԻՐԱՄՈՒՍ

ՎՈՐՈՒԹԻՒՆ

ա) «Վարժարան կը շարունակէ ընդունիլ օտար հայտակալներ ունեցող աշակերտները զիջ ճապարակ: Լիբանանէ կրթական ծրագրէ: Հետագար, անոնք Պետական Քննութիւն չեն անցնելը:

բ) Մանկամարտը բաց է եւ կ'ընդունի 1.5 տարեկանէ սկսեալ փոքրիկներ առատօրէն ժամը 7:30-էն մինչեւ կ. ե. ժամը 2:30 կամ մինչեւ կ. ե. ժամը 5:00 (յատուկ համաձայնութեամբ):

գ) Սեպտեմբեր 2016-էն Մանկավարժի բոլոր դասարանները պիտի սկսին գործել նոր եւ արդի յարմարութիւններով դաստիարակ գաղութի առաջին Հայ Մանկավարժներ օժտում ուսումնական կենտրոններով (Learning Centers):

Տնօրէնութիւն

Գրասենակները փակ պիտի մնան ամբողջ Օգոստոս ամսուան ընթացքին

Լաբորատորիաները Երեւանի 6 Մանկավարժներ միջնաժամը 9:00-1:00:

Լախակրթարանի բոլոր կրթութիւն օժտում են Interactive White Board-երով:

e-skool

**ԱՊԱՔԻՆՄԱՆ ՍԱՂԹԱՆԵ**

«Չարթօնք»-ի եւ Ռամկավար Ազատական մամուլի երեք աշխատակից, ամերիկացի ընկեր Արա Ահարոնեան եւ Ներսիսեան Է վիրաբուժական գործողութեան ու ներկայիս կը բոլորէ ապաքինման շրջան մը:

«Չարթօնք» ամբողջական ապաքինում կը մաղթէ մեր սիրելի աշխատակից ընկերոջ:

**ՄԱՅԱԶԴ**

Վեր. եւ Տիկ. Փօլ Գալտիսեան եւ գաւակները՝ Կարին եւ Դալար Վեր. եւ Տիկ. Սողոմոն Բիլալպեան եւ գաւակը՝ Շահան Տեր եւ Տիկ. Դոկտ. Պարգեւ Թրաշեան եւ ընտանիք (Միացեալ Նահանգներ)

Տիկ. Լիտիա Տեր Եղիայեան եւ ընտանիք (Միացեալ Նահանգներ)

Վեր. եւ Տիկ. Սարգիս Գարամիւնասեան

Պատուելի Սեակ Թրաշեան

եւ համայն Գալտիսեան, Բիլալպեան, Թրաշեան, Տեր Եղիայեան, Սիւրբանեան, Գարամիւնասեան, Փիլաղեկեան եւ Թիւթիւնեան ընտանիքներ ու համայն ազգականները կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին

**ԵՐԻՑՈՒՅԻ ՆՈՒԵՐ ԳՆԱԳՐՈՒՄԻ**

մահը, որ պատահեցաւ Գրեգորի, 28 Յուլիս 2016-ին, կէսօրէ ետք ժամը 1:15-ին, իր գաւակին ընկերակալին մէջ:

Յուրաքանչեւ Գրեգորի պաշտամունքը պիտի կատարուի Ուրբաթ, 29 Յուլիս 2016-ին, կէսօրէ ետք ժամը 2:00-ին, քաղաքի Գալտիսեան Կաթողիկոսական Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Յամուտի Գալտիսեան Կաթողիկոսական Եկեղեցւոյ մէջ:

Ներկայիս ընդունիլ իբրեւ մահազոյ

Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան, Գալտիսեան Կաթողիկոսական Ա. Եկեղեցւոյ դահլիճին մէջ, մինչեւ երեկոյեան ժամը 7:00-ը, իսկ Շաբաթ, 30 Յուլիսին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00-ը, ինչպէս նաեւ Կիրակի, 31 Յուլիսին, կէսօրէ ետք ժամը 3:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00-ը, նոյն վայրին մէջ:

Շանթ. Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Էջրեֆիէի Գալտիսեան Կաթողիկոսական Եկեղեցւոյ կամ Գալտիսեան Կրթական Ֆոնտին:

**ՄԱՅԱԶԴ**

Շողիկ, Կարօ եւ Շահէ Արսլանեաններ

Այրի Տիկ. Ասողիկ Բեշիշեան եւ դուստրը Անգիլե (ԱՄՆ)

Տեր եւ Տիկ. Գրիգոր եւ Սեդա Գոճաօղլանեան եւ գաւակները՝ Յոլի եւ Գրալ

Տեր եւ Տիկ. Անտոնի եւ Միշէլ Բեշիշեան եւ գաւակները (ԱՄՆ)

Տեր եւ Տիկ. Վարդիվազ եւ Սոնա Յովսէփեան (ԱՄՆ)

Տեր եւ Տիկ. Գրալ եւ Նանոր Այնթապեան եւ գաւակները

եւ համայն Արսլանեան, Բեշիշեան, Գոճաօղլանեան, Յովսէփեան, Այնթապեան եւ Թորիկեան ընտանիքներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, հօրաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

**ԸՆԱՐԻԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ-Ի**  
 (ծնեալ Գոճաօղլանեան, 1930-ին)

մահը, որ պատահեցաւ Գրեգորի, 27 Յուլիս 2016-ին: Յուրաքանչեւ Գրեգորի պաշտամունքը կատարուցեալ Գրեգորի, 28 Յուլիս 2016-ի յետմիջօրէի ժամը 3:00-ին, Անթիպիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, որմէ ետք հանգուցեալին մարմինը տեղափոխուցեալ եւ ամփոփուցեալ Պուրճ Յամուտի Ազգային Գերեզմանատան մէջ:

Յաւակցութիւնները կ'ընդունուին Ուրբաթ, 29 Յուլիս 2016-ի առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Պարտաֆի Մար Եօհաննէս Եկեղեցւոյ սրահին մէջ:

Ներկայիս ընդունիլ, որպէս մահազոյ:

\*\*\*

Քնարիկ Արսլանեանի մահուան տխուր առիթով, «Չարթօնք» կը գաւակցի ողբացեալին հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն, ի մասնաւորի Ընկեր եւ Տիկին Գրիգոր եւ Սեդա Գոճաօղլանեաններուն:



«Չարթօնք» 79 երկար տարիներ ծառայած է Հայ ժողովուրդին, իր էջերէն իւրաքանչիւր ընթերցողի հոգիին մէջ ներմուծելով անվերապահ Հայրենասիրութիւն՝ ապահովելով սփիւռքահայութեան ազգային ու մշակութային ժառանգութեան գոյատեւումը:

«Չարթօնք»-ի 79-ամեայ արխիւը կը պարունակէ ոչ միայն Լիբանանահայութեան, այլ նաեւ համայն սփիւռքահայութեան պատմութիւնը՝ Հայ ժողովուրդին վերաբերող պատմական շատ կարեւոր հանգրուանի մը, որ կը սկսի 1937-էն: Բնութեան, ժամանակի ու ապահովական պատճառներով, «Չարթօնք»-ի ամբողջական հաւաքածոյի թուղթ արխիւը վտանգուած էր, հետեւաբար տարի մը առաջ շատ կարեւոր որոշում մը առնուեցաւ՝ թուայնացման ծնունդ փրկելու զայն: «Չարթօնք»-ի ամբողջական արխիւը թուայնացնելը նաեւ կը նշանակէ, հանրութեան տրամադրութեան տակ դնել անոր 79-ամեայ բովանդակութիւնը՝ դիւրահասանելի ու անզուգական բանասիրական ատաղճ տրամադրելով՝ սփիւռքահայ պատմութեամբ հետաքրքրուած բոլոր ուսումնասիրողներուն:

Կը հաւատանք, որ «Չարթօնք»-ի թուայնացումը շատ կարեւոր ներդրում մըն է Հայ Մշակութային պատմութեան մէջ ու ազգանուր պարտականութիւնը անոր բոլոր նուիրեալներուն, որոնց մէջ կարեւոր տեղ կը գրաւեն ինչպէս «Չարթօնք»-ի պատասխանատուները, նաեւ անշուշտ «Չարթօնք»-ի իւրաքանչիւր բարեկամ, ընթերցող ու անոր առաքելութեան հաւատացող:

«Չարթօնք»-ի 79-ամեայ արխիւի թուայնացումի դժուար աշխատանքը կը կարօտի աւելի քան 50,000 ամ. տուարի պիտոնի մը, որուն շուրջ կ'եսը ՀՀԲ Միութեան մեծարգոյ Նախագահ Մեթր Պերճ Սեդրակեանը՝ մեծահոգի ազնուութիւն ունեցաւ տրամադրելու ՀՀԲՄ-ի միջոցաւ: Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինն ալ իր կարգին՝ Ընկեր Յակոբ Գասարեանի վերահսկողութեամբ ոչ մէկ բան կը ինչպէս յաջողցնելու մեզի ձգուած այս մեծ աւանդը ապահով պահելու եւ յաջորդող սերունդներուն սեփականութիւնը դարձնելու կարեւոր գործը:

Թուայնացման աշխատանքները արդէն սկսած են, եւ կարելի եղած է մինչեւ օրս փրկել աւելի քան 20 տարիներու արխիւ «Չարթօնք»-ի ամբողջական հաւաքածոյէն: Այս աշխատանքը շարունակելու համար մենք կը կարօտինք Ձեզմէ իւրաքանչիւրին նիւթական ազնիւ աջակցութեան, որուն համար վստահ ենք, որ Դուք պիտի չզլանաք Ձեր լուսն տրամադրելու նման ազգագուր նախաձեռնութեան մը:

Այս ուղղութեամբ հանգանակութիւնը սկսած ենք ու անոր յատուկ դրամատնային հաշիւը բացած՝ նպատակ ունենալով գոյացնել նախատեսուած պիտոնի ամբողջական գումարը: Ձեր կողմէ նուիրաբերելիք որեւէ չափի գումար իր արժեքը ունի այս գործը աւարտին հասցնելու:

Փափաքողները կրնան իրենց նուիրատուութիւնը կատարել փոխանցելով հետեւեալ դրամատնային հաշիւին՝

**STE. DE PRESSE CHIRAC SARL**  
 A/C No: 864859 461 002 005 06  
 IBAN LB55 0056 0008 6485 9702 0020 0506  
 Bank Audi sal - Dora  
 Bank Identification Code: AUDBLBBX

Այլ միջոցաւ նուիրատուութիւն ընել փափաքողները կրնան կապուիլ՝  
 zartonkadl@gmail.com  
 Կամ հեռաձայնել՝  
 +1 424 777 6282  
 +961 1 444225

Կանխայայտ շնորհակալութեամբ՝

**«ՉԱՐԹՈՆԵ»**

**Մշակութային Յուշատետր**

Ձեռնարկի անուն	Վայր	Թուական	Ժամ
«Չարթօնք»-եան Հանդիպումներ <b>Գ. ԱՐՑԱՆԻ ԳՆԱԳՐՈՒՄԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՆԱԳՐՈՒՄ</b> Կը Չրոցէ՝ Լիբանանի Սօտ Հայաստանի Արակարգ եւ Լիազոր Դեսպան ՍԱՍՈՒԷՆ ՍԿՐՏԻՉԵԱՆ	Թեքեան Կեդրոնի, Ա. Յարկի «ՌԱԿ-ի Լսարան»-ին մէջ, Ժըմմէյզի, Պէյրութ	Երկուշաբթի 1 Օգոստոս 2016	Երեկոյեան 8:00
<b>ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒԿԱՆ - ԳՈԳԵՐՈՐ ԸՐՁԱԴՐՈՅ</b> Կազմակերպութեամբ՝ <b>Ս. Յակոբ Եկեղեցւոյ Աղբատախնամ մարմինին</b>	Պոտյոյի Վայր՝ Արեւմտեան Պեքայի Քրիստոնեայ գիւղեր եւ Եկեղեցիներ	Երկուշաբթի 15 Օգոստոս 2016	Առաւօտեան 7:30
ՇՆՈՐԳԱՅԱՆԱԴՍ Դոկտ. Չաւեն Մարգրեանի <b>«ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿԵԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՐԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹԻՒՆԸ»</b> Գրքին	Թեքեան Կեդրոնի մէջ, Ժըմմէյզի:	Ուրբաթ 9 Սեպտեմբեր 2016	Երեկոյեան 7:30

**Պատրաստեց՝ Մարիա Ե.**

**ՀՈԳԵՅԱՆԳԻՍ**

Այլ Թոնուեանի մահուան քառասունօրէն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Յուլիս 2016-ին, Ռմէյի Ս.Յարութիւն Եկեղեցւոյ մէջ յաւարտ Սուրբ Պատարագի:

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթի մէջ իրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամք անկախ սպորած վրիպակներու պարագային, կ'ապահովենք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: